ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԴԱՐՁԸ

(Շար. Թիւ. էջ 119)

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Գետեզերք. ձիթաստան մը, ուր մտն կու գան Հռիփսիմեան կոյսերը։ Հոն կը հանդիպի Խոսրովիդուխտ, և կ'ըսէ.

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Թագաւորներու կուրծքին մէջ կարծես մետաղէ սիրտ մը կայ, ոչ թէ գթութիւն։

ՀՌԻՓՍԻՄԷ

Անտարբեր Խոսրովիդուխտի խօսքերուն, կ'աղօթէ.

Տէր, շնորհքներուդ բոյրը լեցուց հոգւոյս սափորը, հրեշտակներու բուրաստանին մէջ պիտի բացուին մեր առաքինութեանց ծաղիկները։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Հաստ ձիթենիի բունին քով կեցած, կը բացագանչէ.

Երկինք...

ՀՌԻՓՍԻՄԷ

Անխոստոր դիմեցինք ճանապարհէն, զոր սուրբ խաչը ցոյց տուաւ։

Քոյրեր պատրաստենք մեր իղձերուն անոյշ բոյրերն, թափենք զանոնք հրեշտակաց բուրվառին մէջ։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Ճիշտ նոյն իսկ կոյսերուն աւազ քոյրն է խօսողն։ Կա՛յ բուրում մ'աւելի քաղցրաբոյր՝ քան արդարներու անուրջներն երկնային։

ՀՌԻՓՍԻՄԷ

Կը հասնի ցանկալի ժամը, պատրաստուելու ենք անցնելու տանջանքներու և կրակի աւազանէն։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Առանձին.

Բայց բաւական չէ՞ արդէն այսքան կրած չարչարանքներն։

ՀՌԻՓՍԻՄԷ

Ահա կը բացուի երկնային դուռը, հրեշտակներ կը թռին մեր քով, կու գան մեզ սփոփելու։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Արևմուտքէն հասած մաքուր օրիորդներ, երանի՛ ձեզի։

Գրիգոր դու կրնաս ցնծալ խոր վիրապին մէջ, քարոզներուդ տաք շունչով բացուեցան այս ծաղիկները Հայաստանի հողին վրայ։

Գրիգոր փեսաւեր, արդ կրնաս ցնծալ, ահա՛ այս կոյսերն բռնած են երկնքի ճամբան, անխոստոր կը դիմեն իրենց երանական նպատակին։

ՀՌԻՓՍԻՄԷ

Մայր Գայիանէ երանի քեզ, զի ահա կը տեսնեմ քոյրդ Ջոյի, նահատակուած է ան Դիոկղետիանոսէն, ան արդ կը թռի դէպ ի երկինք, Հռոմի վեհապետը կուսանոցին մէջ զիս չի գտնելով, վրէժը անկէ կ'առնէ. երանի քեզ ընկերուհի, ինծմէ առաջ արժանացար մարտիրոսական սուրբ պսակին։

ԵՐԳ

Կոյսերը միաբերան կ'երգեն.

Երանի մեզի, արժանացանք համբուրելու Յիսուսի սուրբ մուրը։

digitised by A.R.A.R.@

Երանի մեզի, համբուրեցինք Քրիստոսի արիւնով ներկուած Գողգոթայի սուրբ հողը։

Փառք երկնքին, իր հրամանը առինք Տիրամայր Մարիամին գերեզմանին քով, ու անվտանգ հասանք Հայոց մեծաց այս աշխարհը։

ՀՈՒՓՈՍԻՄԷ

Գազաններու ժանիքներէն ազատած, Տէր, հասած ենք շնորհքներուդ աղբիւրին։

ԵՐԳ

Կոյսերը կ'երգեն միաձայն.

Մէջքերնիս դաշտի ծաղիկ գոտի կապած, երկարօրէն քալեցինք, ոտուընիս կարմիր է ներկուած արիւնով։

Սինայի սրբութենէն, հրեշտակներու բանակը շուշան ծաղիկ բռնած, մեզի ընդառաջ կ'ելլէն։ Փոյրեր վառենք ճրագնիս, ահա երկնային փեսան կը հասնի։

ՀՈՒՓՈՍԻՄԷ

Նշաւ մահը և մեզմէ խոյս տուաւ։

Տէր արքայութեանդ դռնէն ներս պիտի տեսնե՞նք արդեօք մեր արևմուտքը։

Տէր միայն արդարն է որ մահով կ'անմահանայ։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Խենթ է այն որ կը թողու առաքինի կեանքը, ուր լոկ կը գտնուի հոգեկան երջանկութիւնը։

ՀՈՒՓՈՍԻՄԷ

Տէր, մեր շուրջը պարսպէ՛ շնորհդ երկնային։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Եւ ասոնք միաբան արիաբար կը տոկան ամէն հալածանքի։

Ո՛վ միութիւն, ուժ գերբնական...

Վազը թող լուան ձիս, թամբ ոսկի վրան դնեն։ Անով պիտի ճախրեմ Մասիսէն վեր. հոն մօտ է դրախտի դուռը, հրեշտակներու բնակարանը։

Բայց ի՞նչ կը տեսնեմ, ահա կը հասնին դահիճներ։ Տրդատ, դաւաճան արդարներու և առաքինիներու։

Կոյսեր, ձեզ կ'ըսեմ, հեռացէք, ահա մահը ձեզ կը հալածէ։

ՀՈՒՓՈՍԻՄԷ

Մահէն հեռանալ, ո՛չ բնաւ, մահն է որ մեզի անմահութիւն կը պարգևէ։

Կը հասնին դահիճները, կը կապեն կոյսերը, ամէնն ալ սիրայօժար կ'երկարեն իրենց ձեռքերն։

ՀՈՒՓՈՍԻՄԷ

Եկէք հրեշտակներ, մեր կեանքին ճրագը արքայութեան մէջ վառեցէք։

Դահիճներ մի՛ վարանիք, պատրաստ ենք գլուխնիս ձեր սուրին տակ դնելու։

Փոյրեր ահա վերջին անգամ արևը կը մտնէ իր մարը, պահ մը վերջ կ'երթանք ծաղկեալու երկնքի դրախտին մէջ։

Կոյսերը կը մնին դահիճներուն հետ։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Տեսարան սիրալի, կոյսեր դուք ձեր հոգին կը լեցնէք կենդանարար մաքուր լոյսով։

Ձեր վարքը հրեշտակային, սորվեցուցինծի, ազնուութիւնը նոր կրօնքին։ Արդ որ կը թողուք այս ձեր վերջին հանգրուանը, անձրևեցէք ձեր օրհնութիւնը. պիտի լուսի ձեր աղօթքը, և մեր երկիրը որ մինչև ցարդ կուռքերու շիրիմն էր, շուտով կը փոխուի կ'ըլլայ նոր հաւատքի նոր արև մը լուսաւորիչ։

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Զիթենեաց և Նոճիներու անտառ, ցրմանոյշներ սպիտակ և վարդագոյն պարեգօտներ հագած, նուիրական տաւարը արծաթ զաւազանով դէպ ի փարախ կ'առաջնորդեն. հոն են Խոսրովիդուխտ և Արժան։

ԱՐՁԱՆ

Հռոմուհիներու ողբական վիճակը զգեզ տխրեցուց. քաջացիր կոյս փափուկ. Քրիստոսէն վեր կայ մեր վահեվահեան վաղգն։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Արժան քու այդ խօսքերդ գնա թափ! նոխազներու մոխրակոյտին վրայ։

digitised by A.R.A.R.@

Տրդատ դուն պիտի գդջաս, անմեղներու արիւնը մտար. Թագդ գլխէդ պիտի իյնայ. պատահական փառքդ տեւական է այնքան, որչափ ծովուն ալիքներուն ձևն անհաստատ։

Արևն իր կրակով պիտի մոխրանայ, Թագաւորն իր ոճիրով պիտի կործանի։

ԱՐՋԱՆ

Այո՛ օրիորդ արքայազարմ, վա՜յ մեր աստուածներուն, վա՜յ մեր երկրին...

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Նրզիծանքը անիրաւներու զէնքն է։

ԱՐՋԱՆ

Սնոտի երկիւղն ալ տկարամտութիւն է։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Քեզի իրաւունք չեմ տար՝ Թագազարմ օրիորդի մը հետ այսպէս համարձակ խօսելու։

ԱՐՋԱՆ

Իշխանութեան զէնքը սալանալիքն է։ Մտիկ ըրէ օրիորդ, մի՛ խռովիր. տես Թէ ինչ կը պատմէ Նանրահաւատ ժողովուրդը։

Հռիփսիմեան օրիորդներու նահատակութենէն վերջը, նոյն գիշերը դահիճներուն վրայ կրակէ արցունք, աստղերու փշրանք կը Թափէին։

Խաչուած Քրիստոսն այն արդարներուն վրէժը կ'առնէր... Ես ալ կարծես ժողովրդեան հետ պիտի ուզեմ հաւատալ սնոտի զրոյցներուն։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Բաւ է, մի՛ շարունակեր այդ բանդագուշանքներդ։ Դուք ո՞վ էք քուրմեր։ Դուք սուտ Թեան պաշտօնեաներ, ձեր մուԹ հոգիին մէջ կ'երազէք կոյր կրօնքի տաճար մը, ուր նենգութիւն և ոճիրն աստուածացուցած էք։ Եւ ձեր սուտերով կը խաբէք միամիտ ժողովուրդը։ Հռիփսիմէն իր առաքինութեամբ նուաստացուց արքայեղբօրս գոռոզութիւնը, աղաւնին կը տապալէր արծիւ մը...

ԱՐՋԱՆ

Սակայն տապալուած արքայն կ'ապրի, իսկ Հռիփսիմէն մեռած է...

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Գաղափարի մը յաղթանակին համար մեռնիլը, անմահութիւն է։

Կը մեկնի, և ահա կը հասնի Տրդատին կինը Աշխէն, որ շուարած ու տագնապած է։

ԱՇԽԷՆ

Կործանեցա՜նք...

ԱՐՋԱՆ

Տիկին շատ տագնապած ես։

ԱՇԽԷՆ

Ո՞ւր է Վահէվահեան աստուածներու պաշտպանութիւնը։

ԱՐՋԱՆ

Նորը հինը կը նսեմացնէ։ Կիներն են որ շուտով կը խանդավառուին նորութիւններով։ Կիներուն համար արդ՝ Անահտայ պաշտամունքը զառամեալ հնութիւն մըն է, անօգուտ և անզօր։ Եւ ինչ որ Աթէնքէն կամ Հռոմէն կու գայ, ան հրաշալիք մը կը համարուի, սակայ մեր ազգային մէկ տկար պատրանքն է։

ԱՇԽԷՆ

Կինը՝ չէ սխալած այդ ըմբռնումով։ Կինը հիացումով կը գնահատէ բարին և օգտակարը։

ԱՐՋԱՆ

Իսկ մա՞րդը...

ԱՇԽԷՆ

Մարդը շահասէր է, իր հաճոյքը, իր շահը կը դիտէ գործին մէջ։

ԱՐՋԱՆ

Մարդը դատելով, քննելով կը գործէ։

ԱՇԽԷՆ

Այո՛ Տրդատ ալ դատելով և քննելով նահատակեց Հռիփսիմէն։ Ո՛չ, ո՛չ, այն

digitised by A.R.A.R.@

իր մոլի կիրքերը չկրնալով զոհացնել, մոռցաւ արքայական լրջութիւնը, ստոր-նացած մտիկ ըրաւ իր կրքերուն, իր թոյլ զգացմունքին։ Եւ կինը գաղափարի յաղ-թանակը քարոզեց, մերժելով զգացմունքի ցնորքները։

ԱՐՔԱՆ

Աշխէն դուն կը նախատես քու ամու-սինդ։

ԱՇԽԷՆ

Ճշմարտութեան մէջ նախատինք չկայ։ Տրդատ անպատուեց հայկական արժանա-պատուութիւնը, վասն զի մտիկ ըրաւ ձեզի պէս անխիղճ քուրմերուն, և անմեղ ա-բիւնով ներկեց մեր երկիրը։

ԱՐՔԱՆ

Անմեղ արիւն...

ԱՇԽԷՆ

Կը տարակուսի՞ս. միթէ այն հոմուհի-ներն անմեղ չէի՞ն։

ԱՐՔԱՆ

Այո՛ կը տարակուսիմ։ Ո՞վ կրցած է ճշտիւ բացատրել անմեղին և մեղաւո-րին հոգեբանութիւնը։ Մարդուն մէջ կայ ուժ մը որ առանց կամքին մտիկ ընելու կը գործէ, և այն որ չար կը համարուի, չարագործին համար ան բարութիւն մըն է։

ԱՇԽԷՆ

Մոլի իմաստակութիւն մըն է ըսածդ, թող այդ խնդիրները, որոնց ճշմարտու-թիւնը մտքէդ այնքան հեռու է, որքան աստղերը։

Գիտցիր Արքան՝ որ յուսահատ է Տրդա-տին վիճակը։

ԱՐՔԱՆ

Պատճառը Հոիփսիմէն էր։

ԱՇԽԷՆ

Ո՜հ ինչ է մարդս, ճակատագրին ձեռքն ինկած ստրուկ մը. կիրքը մարդուն սրտին կպած, կը ծծէ հոգեկան ուժերն։ Վա՜յ թշուառ մարդկութեան։

ԱՐՔԱՆ

Այո՛, կիրքն է որ բաղեղի պէս մարդուս կպած կը ծծէ մեր ուժը։

Բայց առանց կրքի գործը մեռելութիւն է։

ԱՇԽԷՆ

Բայց կիրքը պէտք է ողջմտութեամբ գործէ. ես չհասկցայ Գրիգորին այս խօս-քը թէ. «Առանձինն չարը չար չէ, և ոչ բարին բարի»։ Այո Արքան, կիրքն է որ երբ լուրջ դատողութեան մտիկ չըներ, կը խորտակէ ինքն իր բարի գործը։

Տրդատ շինած էր իր համբաւը, իր մե-ղար ու մոլի կրքովը զայն կործանեց։

Արքան կը դժուարիմ ըսելու... ո՞ր։

ԱՐՔԱՆ

Տիկին, ըսէ, ինչ կայ։

ԱՇԽԷՆ

Սակայն ցաւալի իրականութիւն է որ...

ԱՐՔԱՆ

Ինչ։

ԱՇԽԷՆ

Տրդատ խենթ մը դարձած է։

ԱՐՔԱՆ

Միթէ՞...

ԱՇԽԷՆ

Այո՛, Արքան, Տրդատ խենթեցած է։ Ամէն հիւանդութեանց դարման կայ, դեղ կայ, բայց խենթութեան ո՛չ, բնաւ դեղ չկայ։ Հնդկաստանցի գուշակ մ'ինծի ը-սած է, որ Ախթարներու մէջ գրուած կայ ամէն հիւանդութեանց համար դեղթափ մը, բայց խենթին համար դեղթափ չկայ։

ԱՐՔԱՆ

Անտառին մէջ մոռցուած մանիշակն ա-ւելի նախանձելի է, քան թէ լերան գա-գաթը բարձրացող սեգ բարտին խորտա-կուած...

digitised by A.R.A.R.@

ԱՇԽԷՆ

Ըսել կ'ուզես...

ԱՐՁԱՆ

Ըսել կ'ուզեմ որ քուրմերն արհամարհուած են, բայց հանգիստ և երջանիկ։ Իսկ արքաները փառքերու բարձունքը հասած, երբ իբրև աստուած մը կ'ուզեն պաշտուիլ, և այն ատեն երբ չար բաղդը զանոնք կը տապալէ, անոնց վիճակն իրօք ողբալի է։

ԱՇԽԷՆ

Լռէ՛, ահա ինքը Տրդատն է որ կու գայ։

ՏՐԴԱՏ

Հռիփսիմէ հա՛, դուն հոս ես, բաղդին պատուիրած եմ որ կեանքիդ թելն ոսկի թելով ամրացնէ, Պարկաներն զայն չեն կարող կտրելու։ Դուն պիտի ապրիս արքունիքիս մէջ. դուն պիտի ըլլաս արև, հրճուանք իմ թագաւորութեանս։

ԱՐՁԱՆ

Առանձին։

Իրօք կ'երազէ՛։

ԱՇԽԷՆ

Ճշմարտապէս արդարներու արիւնը իր վրէժը կը լուծէ։ Տրդա՛տ, մտածէ պահ մը, տես ո՛ւր ես։

ՏՐԴԱՏ

Հռիփսիմէ, դուն այլ ևս իմ պալատին տիրուհին ես, նախամնծար քան Աշխէնս։

ԱՐՁԱՆ

Տէր, Հռիփսիմէն քեզի արժանի չէր։

ՏՐԴԱՏ

Աստուածնե՛ր... Ո՞ւր եմ։ Առանձին, քովս մարդ չկայ, բայց արդ ինծի հետ խօսողը Հռիփսիմէն չէ՞ր, և ի՞նչ անոյշ կը ժպտէր, սակայն ես միթէ կ'անրջեմ... Ո՛չ, ո՛չ, ահա Հռիփսիմէն ինծի ծաղիկ կու տայ։

ԱՇԽԷՆ

Գուսաններ սուգի երգեր հիւսեցէք, Տրդատի մոայլ արևմուտքը երգեցէք։

ՏՐԴԱՏ

Հռիփսիմէ ահա հասած ենք Մասիսի կատարը, տես այս մեհեանը, հոս պիտի կանգնեմ քու ոսկի արձանդ, ես ու քուրմեր և ամբողջ ժողովուրդս ու ազգս զքեզ պիտի պաշտենք իբրև մեր երկրին նոր դիցուհին։ Հռիփսիմէ ձեռքդ վեր բարձրացուր, երկինք մեզի մօտեցեր է, ամպերու մէջէն աստղեր ժողվէ, պսակ կազմէ գլխուդ գեղածամ։

ԱՐՁԱՆ

Աղքայ, մի՛ խօսիր այդպէս, կը լսեն վահէվահեան աստուածները, կը բարկանան փաղերն, վա՜յ մեր երկրին, մօտ է մեր կործանումը։

ՏՐԴԱՏ

Մասիսէն իջած, ահա հասանք մեր ամարանոցի դրախտը. Հռիփսիմէ դուն հոս շատրուանի վճիտ ջուրին մէջ ոսկի ձկներ որսա՛ արծաթ ուռկանով։ Տիկին Աշխէն դուն իբրև նաժիշտ ծառայէ իմ նազելի նոր թագուհի Հռիփսիմէին։

ԱՇԽԷՆ

Առանձին։

Սիրայօժար, կը ծառայեմ Հռիփսիմէին՝ որ արդ երկնքի լոյսերուն և փառքին մէջ կ'ապրի երանական կեանքը։

ՏՐԴԱՏ

Հռիփսիմէ տաճարիդ հիմնաքարերն, Մասիսի բարձունքէն ես ինքս շալակած բերած եմ. արձանիդ շուրջը շարած եմ Սողոմոնի տաճարին պորփիւրէ սիւները, գլխիդ վրայ դրած եմ Սափա թագուհիին թագն աղամանդակուռ։ Մեհեանիդ յատակը գորգ ձեւացուցած եմ սատափ խճերով։

ԱՐՁԱՆ

Աշխէն, կը նախանձի՞ս... Տես ամու-

digitised by A.R.A.R.@

սինդ ինչպէս շուտով զբեզ լքեց։ Եւ այս աստուածներու պատիժն է, զի դուն զանոնք լքեցիր։

ԱՇԽԷՆ

Արձան դուն իմ ցաւերս արծարծելու իրաւունք չունիս. միայն կրնաս զարմանալ թէ կինը ինչ հզօր տոկունութեամբ կրնայ դիմադրել հոգեկան բուռն հարուածներու։ Տերտուղիանոս արդ կրնայ համոզուիլ, որ կինը դժոխքի դուռը չէ, այլ համբերութեան մատեանն է՝ զոր չեն կրցած վերծանել ոչ յոյն և ոչ հռոմայեցի իմաստուններ...

Արձան ամօթահար, Տրդատին հետ կը խօսի.

ԱՐՁԱՆ

Տէր արքայ։

ՏՐԴԱՏ

Դուն ո՞վ ես։

ԱՐՁԱՆ

Թոնարհ մէկ հպատակդ, Վահագնի մեհեանին քրմապետը։

ՏՐԴԱՏ

Արձան գնա՛ կոստուն, քրմատունէն արտաքսէ բոլոր արու պաշտօնեաները. պատուիրէ քրմանոյշներու որ նուիրական տաւարէն հարիւր ճերմակ երինջներ ընտրեն ու տանարին դրան առջև շարեն, ու իրենք արծաթ սուրով հոն սպասեն. երբ ես ու Հռիփսիմէն մեհեանէն ներս կը մտնենք, իմ հոռմուհի նոր հարսիս թող զոհուին այն երինջները։

ԱՇԽԷՆ

Տէր իմ արքայ, թո՛ղ այդ ցնորքներդ, զգաստացիր, ա՛ռ քու վաղեմի լրջութիւնդ։ Քաջեր, զինքը ազատ թողուցէք։

ՏՐԴԱՏ

Ո՞վ է խօսողը, դուն ես մայր Գայիանէ. ուրեմն, պատրաստ է Հռիփսիմէն. փեսաւէրն թող երթայ. հռոմուհին յանձն է առած գալ իմ ոսկեձեղուն սենեակս։ Հարիւր նժոյգ թամբեցէք զոհարապատ թամբերով, ոսկեկաշի կազմածներով պատրաստեցէք։ Եւ դուն մայր Գայիանէ՝ այլ ևս ազատօրէն կ՚ապրիս իմ պալատիս մէջ, ազնուազարմ օրիորդներուդ հետ։ Արտաշատի ծմակներուն մէջ ձեզի համար պիտի կանգնեմ վեստալեան նոր մեհեան մը մարմարակերտ։ Փող հնչեցէք, և դուք գուսաններ՝ սիրերգու, պարերգու երգեր նուագեցէք։ Եղևինի անտառին մէջ ջահեր վառեցէք, ահա գիշերը կը հասնի, հազար արծաթ կանթեղներով հարսնեւորներ, դիցանոյշ Հռիփսիմէն դիմաւորեցէք։ Շքեղ սեղաններ պատրաստեցէք, համադամներ ճոխ ճոխ և գեղուն...

Աղաչակ բազմամբոխի.

ԱՇԽԷՆ

Տէ՛ր, նշան նորաքանչ...

ԱՐՁԱՆ

Դաւաճանութի՛ւն...

ՏՐԴԱՏ

Փասիաններ թռան, հազար հազարներով. և հազար բիւր տատրակներ որսացին, հարսանեկան ինջոյրին համար։

ԱՐՁԱՆ

Ի՞նչ կը տեսնեմ, Վաղարշապատի մէջ Վահէվահեան աստուածին հաւատարիմ մը մնացած չէ, ահա ամէն մարդ փայտէ խաչ մը բռնած, Հռիփսիմեանց շիրիմներուն շուրջը ման կու գայ։

ԱՇԽԷՆ

Ո՛վ երկինք, ինչ կը տեսնեմ, խոսրովիղուխտ այդ խումբին մէջ...

ԱՐՁԱՆ

Լղո՛ւկ ինծի, ո՛ւր թագչիմ. աստուածներ վրաս գթացէք։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Մեծ աւետիս։

digitised by A.R.A.R.@

ՏՐԴԱՏ

Ի՞նչ կ'երազեմ, ո՛ւր եմ, կ'երազէ՞մ...

ԱՇԽԷՆ

Պատմէ իշխանուհիս, պատմէ՛։

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Տրդատ մտիկ ըրէ, Նոր յայտնութիւն, Նոր Աստուածն ինծի հետ խօսեցաւ։

ՏՐԴԱՏ

Խաչուած Աստուա՞ծը...

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Նոր Աստուածը, աստուածներու Աստուածն է, ճշմարիտը, անսկիզբը, և անվերջը, հզօր քան ամէն աստուածներն յունական. այն Աստուածն է որ Հռիփսիմէն մեզի քարոզած է։ Հինգ անգամ երկնքէն սուրհանդակ մը եկաւ ինծի. ան շնորհք ու լոյս հագած էր, ու ըսաւ ինծի. գնացէք գտէք Գրիգորը, խոր վիրապէն հանեցէք. թէև անցած են երեք հինգական տարիներ, սակայն այն ողջ մնացեր և կը սպասէ ձեզի փրկութեան աւետարանը քարոզելու։

ՏՐԴԱՏ

Գրիգոր ո՛ղջ, վիշապներու ճիրաններէն ազատա՞ծ։ Ո՛հ ես կ'երազեմ...

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Արքայ եղբայր, ահա՛ ինքն է որ կու գայ. Օտա Նախարարը զայն գուբէն հանեց է. ամբողջ հայութիւնը դարձի եկած է. երկնային է հրաշքը. Հայաստան քրիստոնեայ է այլեւս։

ԱՐՁԱՆ

Առանձին։

Ուրեմն ես երթամ թաքչիմ անոր գուբին մէջ։ Ով աստուածներ, մոռցաք մեր զոհերը, մեր խունկերը, մեր պաշտամունքը։

Կը մեկնի, կը հանէ Գրիգոր, Օտա Նախարարը հետն է, ատոնց կ'ընկերանայ Նախարարներու խումբը։

ԱՇԽԷՆ

Երկինք, ահա՛ նոյն ինքն Գրիգոր։

ԳՐԻԳՈՐ

Տրդատին գլխուն վրայ ձեռքը դնելով, պահ մը լուռկ կ'աղօթէ, և կը խօսի։

Փառք հրաշագործ խաչին, ազատեցայ գազաններու ատամներէն։ Տրդատ հաւատա Գողգոթայի վրայ ողջակէզ անմահ Նահատակ փրկչին։ Երկնային շնորհքն է որ սուրբ Հռիփսիմեանց բարեխօսութեամբ, արդ կը թափի քու և քու կառավարած ժողովուրդիդ վրայ. և քու օրովդ հայութեան անջնջելիութեան կնիքը կը դրոշմուի սուրբ խաչով։ Աստուածային կնիքն և դրոշմը, անսասան պիտի պահէ հիմերը Հայաստան աշխարհիս...

Տրդատ կը համբուրէ Գրիգորին խաչը, ամէնքը կ'աղօթեն բազկատարած, հայրապետը կ'օրհնէ.

ՎԱՐԱԳՈՅՐ

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ՅՈՒՍԱԲԵՐ

Գահիրէի մէջ երկու տարիէ ի վեր լոյս կը տեսնէ չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։ Թերթին արտօնատէրն է Ա. Լալայեանց։ Գլխաւոր խմբագիրն է Հ. Ամիրեան։ Կ'աշխատակցին Կիպրոսի Նիկոսիայէն՝ Տօքթ. Ռ. Թագւորեան. Բարիզէն Տօքթ. Լեւոն Համբարձումեան։ Յօդուածներ կը գրեն Հ. Երամեան, Վ. Գէորգեան, — Մ.Խ, — Արսէն Տիրան, — Ս. Փափազեան և այլք։ Սոէպ Հորիզոնէն և այլ դաշնակցական թերթերէ արտատպումներ ի լոյս կու գան հոն։

Արտասահմանի համար տարեկան բաժնեգինն է Ֆր. 20։ Դիմել՝

Rédaction du journal Arm. « HOUSSAPER »

B. P. 868 LE CAIRE (Egypte)

digitised by A.R.A.R.@